



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 18/19**

31.10.2019թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Ռաֆիկ Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 2019 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ դատարանում քննվող թիվ ՎԴ/11599/05/18 վարչական գործով կիրառման ենթակա «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի սահմանադրականությունը կասկած է հարուցում:

Վիճարկվող դրույթի բովանդակության կապակցությամբ Դատարանը նշում է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրվել է ոստիկանության ծառայողի՝ որևէ կուսակցության, հասարակական, քաղաքական կամ կրոնական միավորմանն անդամակցելու արգելք: Նման սահմանափակման՝ Սահմանադրության 41-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասության հիմնավորման նպատակով Դատարանը գտել է, որ հատկապես քննարկման առարկա պետք է դարձվի իրավունքի սահմանափակման՝ Սահմանադրությամբ կանխորոշված անհրաժեշտ պայմանների ապահովվածությունը, մասնավորապես, հիմնական իրավունքի սահմանափակման իրավական որոշակիությանը համապատասխանությունը և նման սահմանափակման համաչափ և ողջամիտ անհրաժեշտությունը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ վիճարկվող օրենքում օգտագործվող «կրոնական կազմակերպության անդամ» եզրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, թյուրըմբռնման և տարամեկնաբանման տեղիք է տալիս և հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին այնքանով, որքանով նշված սահմանադրաիրավական նորմով հիմնական իրավունքի սահմանափակման պարտադիր պայման պետք է հանդիսանա դրա բավարար չափով որոշակի լինելը, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Դիմողի դիրքորոշմամբ՝ «Կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունը վիճարկվող օրենքում տրված չէ: Պարզ չէ, թե անձի կողմից որ ակտիվ կամ պասիվ գործողության դրսևորումն է, որ կարող է հանգեցնել կրոնական կազմակերպության անդամ հանդիսանալուն:

Դատարանը գտնում է նաև, որ առնվազն անհասկանալի է օրենսդրի կամքը և նպատակը սահմանափակելու անձի կրոնական կազմակերպության անդամ լինելու իրավունքն այն դեպքում, երբ հողվածով արդեն սահմանափակվում է բոլոր հնարավոր եղանակներով ծառայողական դիրքն օգտագործելը ի շահ կրոնական կազմակերպության:

Նշված գործով ՀՀ Սահմանդրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի նոյեմբերի 5-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով սահմանադրական վեճի առարկան կազմող «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

1. Ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝

7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վեպերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել ...:

Այսպիսով, սույն սահմանադրական վեճի առարկան ոստիկանության ծառայողի՝ որևէ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի սահմանադրականության հարցն է:

Նախ, նշված հոդվածի սահմանադրականությունն անհրաժեշտ է քննարկել **իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին** համապատասխանության տեսանկյունից այնքանով, որքանով, ըստ դիմողի, վիճարկվող դրույթից հստակ չէ կրոնական կազմակերպության անդամի հասկացությունը:

Ըստ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի՝ *հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ (ՀՀ Սահմ., հոդվ. 79):*

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ նշել է. «2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (*Busuioac v. Moldova*) վճռում, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ **անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է**: Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ, **անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան**: Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները:

Ելնելով իրավական որոշակիության՝ սահմանադրությամբ սահմանված նորմից, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի կողմից դրան տրված մեկնաբանություններից՝ գտնում ենք, որ ՀՀ իրավական համակարգում **«կրոնական**

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

կազմակերպության անդամ» ձևակերպման իրավական որոշակիությունը խնդրահարույց է: Բանն այն է, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ որևէ կերպ չի սահմանվում «կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունը, որևէ ձևով չի նախատեսվում «կրոնական կազմակերպությանն անդամակցելու» որոշակի ընթացակարգ:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների կազմակերպման և գործունեության միակ իրավական հիմքը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» 1991 թվականին ընդունված ՀՀ օրենքն է, որը, սակայն, բավարար մանրամասնությամբ չի կարգավորում կրոնական կազմակերպությունների հետ կապված հասարակական հարաբերությունները:

Նշված օրենքի 4-րդ հոդվածը տալիս է կրոնական կազմակերպության սահմանումը, համաձայն որի՝

Կրոնական կազմակերպությունը հավատի համադրեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է:

Կրոնական կազմակերպություններ են՝ եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական-եկեղեցական հիմնարկներ:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի համաձայն՝

Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին.

ե) ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Մինչև 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի վերը նշված՝ 5-րդ հոդվածում, որպես կրոնական կազմակերպության հիմնադրման պայման, ի թիվս այլնի, նախատեսվում է նաև առնվազն 200 հավատացյալ անդամ ընդգրկելու հանգամանքը: Ընդ որում, նույն դրույթում սահմանված է նաև 18 տարին չրացած անձանց՝ կրոնական կազմակերպությանն անդամագրվելու արգելք, սակայն անչափահասներին թույլատրվում է մասնակցել կրոնական ծեսերին:

Քննարկվող դրույթից հետևում է, որ՝

ա) կրոնական կազմակերպություններին անդամագրվելը որոշակի ընթացակարգ է իրենից ենթադրում, որին դիմելը սահմանափակված է անչափահասների համար,

բ) կրոնական ծեսերին մասնակցությունը դեռևս չի նշանակում կրոնական կազմակերպությանն անդամակցություն. անձը կարող է մասնակցել կրոնական ծեսերին անկախ կրոնական կազմակերպության անդամ հանդիսանալու հանգամանքից:

Նշված օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «կրոնական կազմակերպության անդամ» կամ «կրոնական կազմակերպությանն անդամագրվել» եզրույթների

բովանդակությունը դրանում բացահայտված չէ: Նշված ձևակերպումները չեն հստակեցվում նաև որևէ այլ նորմատիվ իրավական ակտով:

Նշանակում է, խնդրո առարկա օրենքով նախատեսված է կրոնական կազմակերպության անդամ հանդիսանալը որպես ոստիկանությունում ծառայելու արգելք, սակայն հստակ չէ, թե ում վրա է ի վերջո այդ արգելքը տարածվում: Արդյունքում ոստիկանությունում ծառայության անցնելու հավակնություն ունեցող կամ արդեն իսկ ոստիկանությունում ծառայող անձի համար անկանխատեսելի է դառնում, թե իր որ վարքագիծը կգնահատվի որպես կրոնական կազմակերպությանն անդամակցություն, ինչն էլ հիմք կհանդիսանա ոստիկանությունում ծառայություն իրականացնելն արգելելու համար:

Նույն կերպ, «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության ոչ լիարժեք կարգավորումն անկանխատեսելի է դարձնում իշխանության կրողի գործողությունները՝ վերջինիս համար հնարավորություն ստեղծելով իրավակիրառ պրակտիկայում դրսևորելու կամայական և ոչ իրավաչափ վարքագիծ:

«Կրոնական կազմակերպության անդամ» հասկացության հետ կապված իրավակարգավորումների անորոշությունն իր հերթին վտանգում է ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի **Մտքի, խղճի և կրոնի ազատությունը**:

Այսպես, համաձայն ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի (**Մտքի, խղճի և կրոնի ազատությունը**).

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների սրբեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է մտքի, խղճի և կրոնի ազատությունը: Կրոնական կազմակերպության անդամակցելն, ըստ էության, կրոնի ազատության դրսևորումներից մեկն է՝ որպես կրոնական համոզմունքներն այլոց հետ համատեղ արտահայտելու միջոց: Ընդ որում, սահմանադրությամբ սահմանված կրոնի ազատությունը ոչ

բացարձակ իրավունք է, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ ելնելով պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակներից:

Կրոնի ազատության իրավունքի սահմանափակման հետ կապված՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 2015 թվականի թիվ ՍԴՈ-1244 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«8. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորման սահմանադրականությունը մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի և դրա իրացման թույլատրելի շրջանակների, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշների համատեքստում գնահատելու խնդրին՝ պարզելու համար հանրային շահերով և պետության պոզիտիվ պարտականության կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված անձի սահմանադրական կոնկրետ իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը նույն հոդվածի երկրորդ մասի հիմքերով կարող է սահմանափակվել միայն օրենքով, «եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար», որից, ինչպես և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումներից հետևում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացումն օրենքով ենթակա է սահմանափակման, եթե.

- եկեղեցական արարողությունները, պաշտամունքի այլ ծիսակատարությունները խախտում են կամ կարող են խախտել հասարակական անվտանգությունը,

- այդ արարողությունները, ծիսակատարություններն սպառնում են մարդկանց առողջությանը, խախտում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը»:

Ոստիկանությունում ծառայության անցնելուն խոչընդոտող կրոնական կազմակերպության անդամ հանդիսանալն ըստ էության սահմանադրությամբ սահմանված կրոնի ազատության իրավունքի սահմանափակում է:

Այսինքն՝ օրենսդիրը նշված օրենքով սահմանափակել է այն անձանց կրոնի ազատության իրավունքը, ովքեր ցանկանում են ծառայել կամ ծառայում են ոստիկանությունում. այդ անձինք չպետք է լինեն կրոնական կազմակերպության անդամ, իսկ այդպիսի կազմակերպության անդամ լինելու դեպքում՝ դադարեցնեն իրենց անդամակցությունը կրոնական կազմակերպությանը:

Կարծում ենք, կրոնի ազատության սահմանափակման սահմանադրական նորմն անհրաժեշտ է դիտարկել նաև Սահմանադրությամբ սահմանված համաչափության սկզբունքի համատեքստում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընդրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված

նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Վիճարկվող դրույթի ամրագրմամբ, սակայն, օրենսդիրը չի սահմանել, թե Սահմանադրությամբ սահմանված որ նպատակին հասնելու համար է նման սահմանափակումը կամ այն արդյո՞ք պիտանի և անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար, կամ սահմանափակման համար ընտրված այդ միջոցը արդյո՞ք համարժեք է սահմանափակվող հիմնական իրավունքի՝ կրոնի ազատության նշանակությանը:

Այսինքն՝ իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանելուց զատ, «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության անորոշությունը խնդրահարույց է նաև ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին՝ համաչափության սկզբունքին համապատասխանելու տեսանկյունից:

Կարծում ենք, «կրոնական կազմակերպության անդամ» կամ «կրոնական կազմակերպությանն անդամագրվել» հասկացությունների՝ որպես իրավական ինստիտուտների թերի կարգավորման հարցն անհրաժեշտ է քննարկել իրավունքի բացի համատեքստում:

Ինչպես արդեն նշել ենք գիտավերլուծական կենտրոնի կողմից տրված մեր մի շարք կարծիքներում, **օրենսդրական բացի սահմանադրականության կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.**

«7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ

պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Վերը շարադրված վերլուծություններից ելնելով՝ հարց է առաջանում, թե արդյո՞ք «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթում օգտագործվող «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության իրավական անորոշությունը վերաբերում է բացառապես նշված դրույթին, և արդյո՞ք իրավունքի բացը տեղ է գտել հենց նշված դրույթում: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք «կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունը պետք է մեկնաբանվեր հենց նշված օրենքի վիճարկվող դրույթում, թե՞ մեկ այլ դրույթում կամ մեկ այլ օրենքում:

Սահմանադրական դատարանի վերոնշյալ մեկնաբանումից ելնելով՝ կարծում ենք, իրավակարգավորման քննարկվող բացը պայմանավորված է ոչ թե ինքնին վիճարկվող՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթով, այլ կրոնական կազմակերպությանն անդամակցության ինստիտուտի ոչ լիարժեք, ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է:

Կարծում ենք, սույն գործով իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ուստի այդ բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Գտնում ենք, որ «կրոնական կազմակերպության անդամի» ինստիտուտի հետ կապված առկա է իրավակարգավորման բաց, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է, առավել ևս, որ սույն գործով վիճարկվող դրույթն ինքնին չի խոչընդոտում կրոնի ազատության իրավունքի իրացմանը:

Ուստի, սույն գործով անհրաժեշտ է ՀՀ Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել նշված իրավակարգավորման բացի վրա՝ ակնկալելով, որ վերջինս միջոցներ կձեռնարկի իրականացնելու համապատասխան իրավաստեղծ գործունեություն իրավակարգավորման բացի հաղթահարման ուղղությամբ՝ հաշվի առնելով իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների, խղճի, դավանանքի և կրոնի ազատության իրավունքի վերաբերյալ սահմանադրական նորմերը և դրանց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում տեղ գտած դիրքորոշումները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

– «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց չէ՝ դրանում իրավակարգավորման բացի հակասահմանադրականության հիմքով:

– Կրոնական կազմակերպություններին անդամակցության ինստիտուտի ոչ ամբողջական կարգավորումն իրավակարգավորման բաց է, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավազորությունն է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան